Ըսէ ծովում մէջ անյատակ
Ո՞րչափ շքոյ կաթիլներ կամ :
— Միթէ կայ բան մ'ասկէ յրստակ,
թէ և ըլլայ լի ովկիան :

Արգիլեցէ՛ք, տէր իմ արքայ,
Լոկ այս խրոնիրքը ձեզ կ'ընեմ,
Որ ամծրևի չիթ մ'ալ չէյնայ
Մինչև որ ես ամբողջ համրեմ :

— Էիմկու հիմայ ըսէ ո՞րքան
Երկինքն աստղեր կամ փայլունակ,
Որ պատռեմ քոզը գիշերուան :
— Իմ պատասխանս է անսայթաք.

Հաւաքեցէք զանոնք ամէն
Նէ ըսէք որ հոս վար իջնան,
Նէ ես բոլոր պիտի համրեմ
Մեծ փոքր առանց բացառութեան :

— Սըրնամս ըսել թէ քանի՞ օր
Ցաւիտենից մէջ պիտի ՝ լլայ՝
— Իրաւցրնէ, տէր թագաւոր,
Այս հարցումէն դիւրին բան կայ :

Հրաման տուէք, տէր թագաւոր,
Որ կեցրնէ ժամն իր անխ,
Չի համրելով ես քիւրաւոր
Օրերն անոնց տամ ձեզ հաշիւ :

— Հասակիդ քով խելքդ է նրրքին,
Փոքրիկ հովիւս, ըսաւ արքայն.
Ցուլեր գիտնոյ պէս պատասխան.
Կեցի՛ր հոս, իմ եղիր որդին :

ԹՐԳՄ. Հ. ԱՐՈՒՆ ՂԱՋԻԿԵԱՆ

---

## ՇԱԴՈՊԻՈՒՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՑՈՐԵԼԵԱՆՆ (1768–3 ՑՈՒԼԻՍ 1848)

Ցուլիս 4ին Հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Սէն Մարոյ Հանդարտ, զուարթ և Հովանաւոր փոքրիկ քաղաքին մէջ՝ ուր մեծ բանաստեղծն շարադրեց Վիկայքը, և իրեն ուրիշ գործերը. Հոն՝ ուր կը գտնուի նաև իւր գերեզմանը և ուր կարծես մենակեաց կը շրնագային Ռը-նեի գոռոզ և մելամաղձոտ, և անմոռանալի Ատաշային ազնիւ և միամիտ ոգիները։

Լոյս տեսնելու վրայ են նոր տպագրաւ թեամբ Ազնդրերզմանեան յիշատակները, որ այդ հանդիսական հանդիսին արժանաւոր յիշատակ մը պիտի ըլլան։

---

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

ՕԳՈՍՏՈՍ 20

### ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԵՒ ՍՊԱՆԻԱ

Յետ երկար բանագնացութեանց ընդկամբոնի դեսպանի Գալլիոյ, Սպանիոյ կողմանէ, և ընդ. նախագահն Մըկ-Քինլէի, հաշտութեան նախաստանմանքը որոշեցան և ստորագրուեցան երկու կողմանէ Օգոստոս 12ին, որոնք վեց յօդուած կը պարունակեն.

1. Սպանիա կը հրաժարի Կուբայի վրայ ունեցած իշխանութենէն։

2. Պորտօ Ռիքօ և Սպանիոյ Հնդկ–Արեւմտեան միւս կղզիք, ինչպէս նաև Լատրոնէս արշիպեղագոսի կղզիներէն ոմանք, ըստ ընտրութեան Միացեալ Նահանգաց, կը մնան Միացեալ Նահանգաց։

3. Միացեալ Նահանգք պիտի գրաւեն Մանիլայի քաղաքը, ծոցը և նաւահանգիստը, մինչև որ խաղաղութեան վերջնական դաշինք ստորագրուին և որոշուին Փիլիպպեան կղզեաց ստանալիք կառավարութիւնը։

4. Կուբա, Պորտօ Ռիքօ և Հնդկ–Արեւմտեան կղզիք փութով պիտի պարպուին ի Սպանիացւոց։ Առ այս երկու կողմանէ տասը օրուան մէջ գործակատարք պիտի որոշուին, որոնք 30 օրուան մէջ պիտի սահմանեն պարպուելու վերաբերեալ ամեն խնդիրք։

5. Խաղաղութեան համար Սպանիա և Միացեալ Նահանգք հնգական նուիրակք պիտի անուանեն, որոնք ամենէն ուշ Հոկտեմբեր 1ին պիտի գումարուին ի Պարիս։

6. Հաշտութեան նախաստանմանց ստորագրուելէն անմիջապէս կը սկսի զինադադարը, և պէտք է փութով հրամաններ ղրկուին, այս իմաստով, ցամաքային և ծովային հրամանատարաց։

Եթէ Սպանիոյ Թագուհին և եթէ Միացեալ Նահանգաց նախագահը յայտնեցին իրենց շնորհակալութիւնքը, առ փարչութիւնն Գալլիոյ, իրեն անշահախնդիր և բարեկամական միջնորդութեանն համար։ որով հաշտութեան նախաստանմանքը փութով ընդուներ էին։ Սպանիոյ Թագուհին Կարլոս Գ-ի առաջին խաչը շնորհեց

digitised by A.R.A.R.@